

կամ տալիս են այնպիսի անպիտան եղներ, որ գիւղացիք հրա-
 ժարւում են ընդունել: Սպառնալիքը, ուժը լռեցնում է նրանց
 և ստիպում համակերպուելու մասնաժողովի ցանկութիւններին.
 դժուար չէ դուշակել, թէ ի՛նչ ոյժ էր այդ:

Միակ միւթարական ճշգութիւնը հաշիւներէ կողմից նկա-
 տելի է Տ. Լևոն վարդապետի նախագահութեամբ կազմուած
 մասնաժողովի գործունէութեան մէջ 1906 թ. մայիսից—1907 թ.
 սեպտ. : Այս մասնաժողովը 8 անգամ հաշիւ է տուել Կեդրո-
 նական նպաստամատոյց Յանձնաժողովին, ապա նախիջևանում
 քննել է փաստաթղթերի հետ Յանձնաժողովի ներկայացուցիչ
 պ. Արամ Տ. Գրիգորեան: Այս մասնաժողովի ձեռքով ծախ-
 սուել է 28950 ը. 60 կ., որի մանրամասն հաշիւը դրուած է
 մեր առաջ հարկաւոր բացատրութիւններով:

Գ.

Քարգէն վարդապետ « Կաթուղիկոսական ընտրութիւն եւ
 կանոններ » Վարդապետ 1908. գիցն է 40 կոպէկ:

Վերնագիրը ցոյց է տալիս գրքի էական բովանդակու-
 թիւնը. Կաթուղիկոսական ընտրութիւն և կանոններ: Որքան էլ
 նորելուկներ գոռան, գոչեն, հայ ժողովուրդը դեռ մնում է
 հաւատարիմ իւր ազգային եկեղեցուն, որ զրկուելով իւր հո-
 վուից, ինչպէս գրքի ճակատին Խորենացու ողբից առած պատ-
 շածաւոր բնաբանից երևում է, բնականաբար կը հետաքրքրուի
 իւր ապագայ հովուի ընտրութեամբ:

Ուրտի մի սիրուն գործ է կատարել Հ. Քարգէնը ամիո-
 փելով հայրապետական ընտրութեան կանոնները իւր յարակից
 խնդիրներով: Գրքոյկիս բովանդակութիւնն է Տեղակալ կար-
 գելը, Կաթուղիկոսի ընտրութեան ժամանակը որոշելը, պատ-
 գամաւոր ընտրող բոլոր թեմերը անուն անուն, պատգամա-
 ւորների թիւը, Տաճկահայոց վէճն այդ մասին, թեմական պատ-
 գամաւորների և Կաթուղիկոսի ընտրութեան կանոններ, վեր-
 ջինս, ռուսերէն ընագրով: Գրքոյկիս համարեա վերջին կէտը
 նուիրուած է մի շատ հետաքրքրական խնդրի «Տանկահայոց
 մասնակցութիւնը Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութեան»,
 մէջ են բերուած անտիպ վաւերագրեր, որ անցեալում փոխա-
 նակուել են Ա. Էջմիածնի միաբանութեան, ժամանակի տեղա-
 կալի և արժանայիշատակ Մերսէն Պատրիարք Վարդապետեանի
 միջև: Այս խնդիրն իսկապէս արդէն լուծուել է Խրիմեանի ընտ-

բութեանը, բայց վաւերագրերն ունին պատմական նշանակութիւն և անշուշտ արժանի հրատարակութեան:

Անտիպ վաւերագրերի այս հրատարակութիւնը մեզ յիշեցնում է, թէ վերջապէս ժամանակ է, որ Ս. Եջմիածնի միաբանութիւնը ձեռնարկէ իւր Սինոզի և հայրապետական գիււանի գոնեա կարևոր պատմական վաւերագրերը հետզհետէ լոյս ընծայելու:

Առաջին անգամը չէ, որ Հ. Բարգէնը գրական տպարէզն է հանդէս գալիս: Մինչև այժմ նա հրատարակել է Առաքել Գաւրիսի վարձագրութեան երրորդ տպագրութիւնը, որ նախորդներէն լուսագոյն է: Յետոյ առաջին անգամ նա է լոյս ընծայել Զուգայեցի Խաչատուր Արեղայի «Պատմութիւն Պարսից», որ ոչ միայն Պարսից նորագոյն շրջանի, այլ և մեր նոր—Չուղայի Հայոց պատմութեան և դպրոցի շրջանի համար անգնահատելի նիւթ է տալիս իբրև ժամանակակից յիշատակարան: Ապա տուել է Ա. Կրիմսիու «Մահմետական աշխարհն ու նորա Ապագան» պատմական սիրուն և սեղմ գրուածքի յաջող թարգմանութիւնը. իսկ վերջին գրքոյիով գալիս է լրացնելու նախ և առաջ մի գործնական պահանջ, որի առթիւ հրատարակել է և պատմական անտիպ վաւերագրեր:

Ուրախալի է տեսնել, որ երիտասարդ ճեմարանական վարդապետները իւրեանց պաշտօնական պարապմունքներից դուրս ազատ ժամանակը նուիրում են գրական երկերի և հրատարակութեանց:

Ս. Կանայեան.

«Տունկերը ու անոնց հայերէն անունները». Դոկտ. Յովն. Արթինեանի, Փարիզ, 1906 թ. տպ. Տողրամաճեան, in 8, պատկերազարդ. մաքուր տիպ, գինը 1 ֆ. 25 սն.—

Մեզանում զգալի կերպով բացակայում է մեր երկրի բոյսերի հայ անունների ժողովածուն: Տաճկահայերը պէտք է ասել այդ ճիւղին շատ աւելի յառաջ ու լայն ուշադրութիւն են դարձրել: Ալիշանը իւր «Հայրուսակ»-ով, Քաջբերունին իւր «Բառգրքով» այս գործի հաստատուն սկիզբը դրին ու ապացուցին, որ մեր լեզուն զուրկ չէ բոյսերի հայերէն անուններից, ինչպէս և մեր երկիրը ճոխ ու բեղուն բուսական արտադրութիւնից, լեռներն ու հովիտներ—